

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմիայն Երկուսի 14-ի մասին:  
Օտարաքաղաքացիք գինում են ուղղակի  
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
իրարանցիւր լրտին 2 կոպեկ:

### Մ Շ Ա Կ

ԼԻՍԱՅԻՆ ԿԱՐԵՆԻ Է ԳՐՎԵԼ

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ին ներկայ 1881 թւի, մինչև յունվարի 1-ը 1882 թւի: Բաժանորդութեան գինը 6 րուբլ է: Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետեւեալ հասցեով. Тифлисъ, редакція «Мшакъ»

#### ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածումները.—ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, Հայոց բարեգործական ընկերութիւն կողմանում: Նամակ Գորոց: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, Թիւրքիա: Գերմանիա: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից: — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Ընտրողական շարժումը գերմանիայում աւելի և աւելի մեծ ընդարձակութիւն է ստանում: Կարելի է ասել որ ամբողջ Եւրոպայի հայեացքները այժմ ուղղված են գերմանիայում պատրաստվող անցքերի վրա: Ամենք անհամբերութեամբ են սպասում թէ ինչ հետեւանքներ կունենան գերմանական պարլամենտի համար առաջիկայ ընտրութիւնները: Այդ ընտրութիւններից է կախված իշխան Բիսմարկի բռնակար քաղաքականութեան պահպանվելը թէ չը պահպանվելը, կախված է նոյն իսկ Բիսմարկի դրոյթի ընդմէջ:

Իւրաքանչիւր կուսակցութիւնը յայտնել է շրջաբերականներով իր քաղաքական համայնքը: Բիսմարկի կողմն է առժամանակ միմիայն հին պահպանողական կուսակցութիւնը իսկ նրա առաջիկայ դաշնակիցները, ազատականները, պարզ յայտնում են իրանց շրջաբերականներում որ միշտ ընդդէմ կը լինեն պետական կանցլէրի քաղաքականութեանը, որովհետև նա ձգտում է զիջաւորութեան և գերմանիայի մէջ բոլոր ազատութիւնները ոչնչացնելուն: Աւելի կողմից պահպանողականները մեղադրում են ազատականներին որ սրանք սրբերում են կառավարութեանը հող տանել բանորներին նիւթական դրոյթեան մասին: Այդ տեսակ մեղադրանքներով Բիսմարկ կամենում է ժողովրդականութիւն ստանալ ամբողջ մէջ:

Մի և նոյն ժամանակ քանի մտնելում են ընտրութիւնները այնքան սօցիալ-դէմոկրատները աւելի հայածվում են կառավարութեանը, անթիւ սօցիալ-դէմոկրատները աքսորվում են, բանտարկվում են, քաղաքները պաշարման դրոյթեան մէջ են յայտնվում, լրագրիները արգելվում են: Բայց երբ մի քաղաքում մի լրագիր արգելվում է, սօցիալ-դէմոկրատները տեղափոխում են իրանց մամուլը բոլոր գրաշարներով մի այլ քաղաք և այնտեղ շարունակում են իրանց հրատարակութիւնը, անդադար և անինսոյ յարձակվելով կառավարութեան դէմ:

Բիսմարկի վերջին ժամանակների գաշնա-

կիցները՝ կղերականներն էին Բայց սրանք էլ այժմ հաղիւ թէ կարողանան Բիսմարկին ձեռք մեկնել մանաւանդ իւր XIII պապի վերջին էնցիկլիկայից յետոյ, որի մէջ պապը մի հրէշաւոր անտակաութիւն, մի աններելի անզգուշութիւն արաւ: Բայտնի է որ գերմանիայի ազգաբնակչութեան մեծ մասը, նոյն իսկ Թագաւորական ցեղը և ինքն Բիսմարկը բողոքական կրօնին և պատկանում, իսկ պապը իր այդ էնցիկլիկայի մէջ յայտնում է որ մարդկութեան ամենամեծ թշնամին բողոքականութիւնն է, որ այդ կրօնը մայր է յեղափոխութեան, սօցիալիզմի, կոմունիզմի, նիւ-հիլիզմի և ամեն տեսակ փեսակար հասարակական վարդապետութիւնների, որոնք տիրում են ժամանակակից մարդկութեան մէջ: Պարզ է որ պապի այդ տեսակ անզգուշութեանց յետոյ գերմանական կաթոլիկ կղերական կուսակցութիւնը անկարող կը լինի ձեռք մեկնել Բիսմարկին բնական է, ի հարկէ, Հռոմի պապի, կաթոլիկութեան զլխի ատելութիւնը դէպի ամենաաղաա ջրիտոնէական կրօնը, դէպի բողոքականութիւնը, բնական է որ նա բողոքականութիւնը համարէր եկեղեցու վերաբերութեամբ վերանորոգիչ, յեղափոխական շարժում, — բայց համարել բողոքականութիւնը սօցիալիզմի և այլ փեսակար քաղաքական վարդապետութիւնների մայր՝ դա ամենամեծ անարդարութիւն է: Իսկ գերմանական պարլամենտի ընտրութիւններից առաջ արտասանել այդ տեսակ խօսք և բողոքականութիւնը պատասխանատու դարձնել մարդկութեան ամեն տեսակ ցարիքի և չարիքների, — դա քաղաքական ամենամեծ անհեռատեսութիւն է:

Գեռ դա պատմութեան մէջ չը վճռված հարց է՝ ո՞ր պետութիւնները աւելի ենթարկում են արիւնահեղ յեղափոխութիւններին, ճայրայեղ վարդապետութիւններին, ինչպէս կոմունիզմ և սօցիալիզմ, — այն պետութիւնները որտեղ տիրում է բողոքականութիւնը, թէ խիստ, միապետական, ատուածապաշտ կրօնները կաթոլիկութեան նման:

Գերմանիան ներկայացնում է այժմ մի չեղած երեւոյթ. կուսակցական կռիւների, քաղաքական սպարքէզե մէջ սկսում են մտնել և մանակցիկ ընտրողական շարժման և գիտութեան մարդիկ: Երեւելի գերմանացի Հարտման հրատարակել է նորերում մի շարք յօդուածների պարլամենտարիզմի և սահմանադրութեան մասին, խստութեամբ քննադատելով և պահպանողական և ազատամիտ կուսակցութիւնը: Հարտման խորհուրդ է տալիս գերմանիային տնտեսական ինքնիշխան վերաբերութեամբ հետեւ պահպանողական ուղղութեանը, բայց քաղաքական հարցերի վերաբերութեամբ ընդունել անկեղծ ազատամիտ բէֆօրմների ընթացքը և այդ բանի մէջ օրինակ առնել Եվրոպայից և Ամերիկայի Միացեալ-Նահանգներից:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այսպիսի մի ընկերութիւն կազմելու գաղափարը յղացաւ անցեալ 1880 թւին հայ հասարակութեան մէջ Թիֆլիսում, նա հետզհետէ արձարձվեցաւ և վերջապէս հասարակութիւնը գումարով չհրապարակապէս հաստատեց ընկերութեան կազմած կանոնադրութեան նախագիծը:

Հասարակութիւնը ընտրեց հաւատարմատար անձինք նախագիծը պատշաճաւոր իշխանութեան վաւերացմանը ենթարկելու: Եւ ահա, յուլիս ամսին 6-ին, կովկասեան ֆոխարքայի պաշտօնակատար գեներալ-գրիտանտ իշխան Մելիքով բարեհաճեց հաստատել «Հայոց բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը:

Կանոնադրութիւնը բաղկացած է 50 յօդուածից, որոնցից առաջինը արտայայտում է ընկերութեան նպատակը և երկրորդը այն եղանակները, այն միջոցները, որոնցով ընկերութիւնը հասնում է իր նպատակին: Աւելորդ չենք համարում այժմ առաջ բերել այդ երկու հիմնական յօդուածները:

1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ կովկասում և Անդրկովկասում և օգնել նուցա նիւթականագէս:

2. Այս նպատակին հասնելու համար ընկերութիւնը, ըստ իր ոյժերի զարգացման՝ ա. պահպանում է արդէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները և նիւթականագէս նպաստում է նորերի հիմնելուն. բ. օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը. գ. օգնում է ուսանողներին իրանց ուսման ասպարիզի մէջ: Դ. լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ զբաղական երկարութիւններ. ե. հիմնարկում է տպարաններ, վիճագրատներ և ընթերցարաններ. զ. հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ. է. օգնում է տառապալներին ժողովրդի թշուառութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սոյ, տարափոխիկ ախտ, հըր-դեհ, և այլն. այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր, կամ ուղարկում է իր կողմից հաւատարմատարներ. ը. իրաւունք ունի կարեւոր դէպքերում նպաստել և այլ ազգագրութ ընկերութիւններին:

Ծանօթութիւն. Վերջիշխալ այն կէտերի վերաբերմամբ, որոնց մասին օրէնքով պահանջվում է կանխուպէս ունենալ պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը, ընկերութիւնը սկսում է իրագործել իր ձեռնակութիւնները այդ թոյլտուութիւնը ստանալուց յետոյ:

Մենք կաշխատենք հրատարակել մամուլի միջոցով կանոնադրութիւնը ամբողջապէս և տեսնել բոլոր անհրաժեշտ նախապատրաստութիւնները սեպտեմբերին առաջին ընդհանուր ժողովը կոչելու համար, որ

կրնորի ընկերութեան պաշտօնատար անձանց և որից սկիզբ կառնի ընկերութեան գործունէութիւնը:

Բ. Նաւասարդեան

### ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Յուլիսի 10-ին

Թանգութիւնը առաջ շատ խորթ էր կրկում ժողովրդի աչքին, այնպէս որ եթէ այստեղ աշխարհի սուղը ծախվէր 60 կոպեկով, չէին առնի և այնքան կը մանազային մինչև որ գոնէ տաս կոպեկով պակաս առնէին, իսկ այժմ Թանգութիւնը այնպիսի սովորական բան է դարձել, որ ինչ որ գնահատեն, իսկոյն կը տան և կանոն, Ահա այս բանն է առիթ տալիս ծախողներին աւելի թանգ ծախելու: Այստեղ աշխարհի սուղը ծախվում է 1 ր. 50 կ., մի ֆունտը 10 կ., պանրի ֆունտը 20 կ., իւրի ֆունտը 50 կ., և այլն: Անցեալ տարի թէպէտ մարեիւր մի քանի տեղերում երեցաւ ու ոչնչացրեց արտերը, բայց էլի լաւ հոնձ կար, իսկ այս տարի ոչ մտրիկ կայ և ոչ խաղողի հիւանդութիւն: Այս տարի ամեն բանի առատութիւն կայ և մեծ է ժամութեան յոյս ունենը:

Այստեղի քաղաքային դրաման իր պարտականութիւնը ճշտիւ չէ կատարում: Փողոցները շատ կեղտոտ են և մարքելու ու ջրելու վրա ուշադրութիւն չէ դարձնում: Փողոցները լի են աղբով ու թողով և քառիկ ժամանակ անցուդարձ անողների աչքերը լցվում են թողով, այնպէս որ չպարէր չեն կարողանում ամենից դուրս գալ կրք քամի է լինում: Այստեղ համարեա ամեն օր քամի է լինում: Այստեղի փողոցների ջրելը մեծ բան չէ, մասնաւոր մեծ փողոցի, որտեղ անցնողներն ու զբօսողները շատ են լինում, և որի աջ և ձախ կողմերում ջրանցքներ են անցնում: Հարկաւոր է միայն վերցնել թի և ջուր ցանել փողոցի վրա:

Գիշերները փողոցները լուսաւորված են ազօտ լուսով և սրա վրա էլ ուշադրութիւն դարձնող չը կայ: Միայն այս երկու օր է լաւ են լուսաւորված, որովհետև կապալով վերցնողի ժամանակը լրանում է և վերջին անգամ լաւ լուսաւորութիւն հոյց տալով, խորում է գործցիներին և կրկին մի և նոյն կապալաւորին է մնում: Այս բանը կրկնվում է ամեն տարի: Կապալաւորն առաջ լաւ է լուսաւորում փողոցները, յետոյ վատ, և վերջը լրանալու ժամանակը լաւ: Այսպիսի հնարքով կապալաւորները չանվում էին, իսկ գործցիները կուրանում:

Անցեալ և այս տարվայ մեծ ջրերը մեծ փեսա տուեցին Գօրուն, սննք քանդեցին և աղկիներ ոչնչացրին: Անցեալ տարվայ ջուրը քանդեց Գօրը գետի վրա շինած փայտէ մեծ կամուրջը, իսկ այս տարի—փոքրը և այժմ ջրի վրա ման են գալիս լուստափայտով (НАЛОМЪ): Գօրու համար կամուրջը անհրաժեշտ է, որովհետև երկաթուղու կայարանը գտնվում է Գօրը գետի աջ կողմը, իսկ քաղաքը—ձախ կողմը, և ճանապարհորդները մեծ դժուարութիւն են կրում լուստափայտով անցնելու ժամանակ: Ազոզուց է մտադրութիւն կայ երկաթէ կամուրջ շինելու, բայց այդ լուի խօսք էր և ոչ թէ գործ: Գօրեցիք այնպիսի մարդիկ չեն, որ ինչ որ ստան կատարեն: Արանք խօսքով ամեն բան կը շինեն, իսկ գործով ամեն բան կը քանդեն: Առհասարակ սրանք անում են այն, ինչ որ փեսասկար է:

Գօրեցի

### ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐԻՆ

Թիֆլիս, 11 յուլիսի


Ամենայն տարի սովորութիւն ունենալով մեր ազգայիններից շատերը իրանց որդոց անուա-





# Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Въ Редакціи газеты  
«МШАКЪ»  
Продается  
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ  
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“  
Д. Григорія АРЦРУНИ.  
Брошюра напечатана въ Москвѣ.  
Цѣна 25 коп.



ВЪ ГАЛЕРЕѢ АРЦРУНИ  
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ  
ВЪ НАЙМЫ

Въ галереѣ имѣются: вода, газовое  
освѣщеніе и телеграфная станція.  
5—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՄ  
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՄ ԵՆ ՄԱԿԱՋԻՆԵՐ  
Գաղթելու կայ ջուր, գաղի լուսավորու-  
թիւն և հեռագրական կայարան:  
5—10

ՎԵՐԱԳՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր.,  
ճալիղ աթոռներ 1 ր. 50 Կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ  
4 ր., ԲԱԶԿԱԹՈՒ-ՄԱՀԱՎԱԿԱԿ 10 րուր և  
տեղի, թէյի բաժակներ 25 և 30 Կ., մի  
աման ջրոցներ 50 Կ., պատելա ծխողների  
համար 60 Կ. Փունտը, անգլիական ՎԱՆՆԱ-  
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-  
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:  
10,000 զոյգ գուլաններ 25 Կ.—ից զոյգը,  
10,000 զոյգ կանանց ԳՈՒՐԱՆԵՐ 30 Կ.—  
1 ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 ր.,  
1,000 ՄԱՀԱՎԱԿԱԿՆԵՐ 5 ր.—35 ր., 400  
արշին բոմպէյ. 1 ր.—1 ր. 30 Կ., պա-  
րուսինա 40 Կ.—1 ր., 300 հատ րէֆոլիեր  
4 ր.—35 ր., 700 արբոժ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000  
ֆունտ թէյ, թէ՛ՅԱՄԱՆՈՎ, 1 ր. 65 Կ.: եր  
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-  
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ  
ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:  
20—100

ԿԱՐԻ և ՁԵՒԻ ԴԱՍԵՐ ամենանոր եղա-  
նակով ԳՏԱԳՐՈՒԹԵԱՆ օգնութեամբ թիղճ  
աղջկերանց համար առանձին պայմաններով:  
Ընդունվում են կանանց և երեխաների հա-  
մար ԿԱՐԵՐ: Ծախվում են կարերի նոր ձե-  
ւեր թղթից շինված, պատրաստվում են  
մեքենայով ծախք: Կուկի, Նիկոլայեվսկայա  
փողոց, տուն № 87:

ԿԱՀԱՒՈՐՎԱԾ ՄԵՆԵԱԿՆԵՐ  
10 ր. մինչև 30 ր. ամիսը ծառայով և  
ամսովարով: Տրվում են նոյնպէս օրով Ար-  
տիկերիսկայա փողոցի վրա, գինուորական  
գինուարիայի հանդէպ Արուսեակցի տանը,  
№ 8:

2—4 (5)

Հրատարակութեամբ Ներսիս Միսէօն-  
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Նրէրերի  
„Տնային բժշկական մարմնամարդութեան“  
գրքի: Հայերէն թարգմանութիւնը 45  
պատկերով, որոց միջոցաւ կարելի է  
կատարել առողջապահական բազմատեսակ  
մարմնամարդական կրթութիւններ ամեն  
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:  
Նա յարմարացրած է ամեն հասակի արանց  
և կանանց համար: Գինն է 40 կօպ. ծախ-  
վում է „Կենտրոնական և Կովկասեան գրա-  
վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. վար-  
դանեանցի մօտ.“ Тройцкій пер. типо-  
графія Вартачанца, въ Тифлисе.

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐՁԵԼԵԱՆ

գինն է 70 կօպէկ

Ուսումնարանները և շատ օրինակ գնող-  
ները 20% զիջում են ստանում:  
Ցանկացողները կարող են գինել կամ  
ուղղակի հեղինակին „Тифлисе, Григо-  
րіо Соломоновичу Вардзелянъ, Ар-  
мянская Семинарія, կամ կենտրոնական  
գրավաճառանոց, ուր պահեստն է այդ գրքի:

Открыта полугодовая подписка

НА

ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЬ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(Издаваемый въ г. Тифлисе)

Съ 1 Іюля 1881 года по 1 Января 1882 года.

Цѣна за полъ года 6 руб.

Кромѣ того можно подписаться на  
3 мѣс.—3 руб. 20 коп., на 1 мѣс.—  
1 руб. 20 коп. Подписка принимается  
съ 1 числа каждаго мѣсяца и не  
далѣе конца года.

Разсрочка въ взносъ денегъ допускается  
по соглашенію съ администраціею жур-  
нала.

Подписка принимается исключительно  
въ администраціи журнала, въ г.  
Тифлисе, близъ Головинскаго пр.,  
по Безыменному пер. въ домѣ Та-  
мамшева.

Издатель А. С. Френкель.

Редакторъ А. В. Степановъ

## Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՑՆԵՐ ՎԵՐՁԻՆ ԹՈՒՄ-ԹՈՒՐԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵԳԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՅԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-  
կանոււմ 400 կրկնից թիֆլիսում ծախվում է  
„Մշակի“ խմբագրատանը, „Կենտրոնական  
գրավաճառանոցում“, „Կովկասեան գրա-  
վաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորյան-  
ցի մօտ, և պ. պ. Եսայիանցի, Բոզլար-  
Չեանցի, Հովսեփանցի ծխախոտի մալապի-  
ններում:

Գինն է 1 րուր 20 կօպ:

ԱՅՍ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ՍԿՋԻՑ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Որ առաջ գտնվում էր Արժրուու գաղթելու, անցաւ Մի րի ման և անի  
խանութները, Գործիչների Պրոսպեկտի վրա, Սուգերի Պալատի տակը № № 3, 4  
(երբեմն Չանջուգահանների խանութը):—Այս 1881 թուականից գրավաճառութիւն կից

Ա. Մի առանձին բաժին ուսումնարանական, զիւնական, գրագիտական պիտոյքների,  
ուր փաճառվում են թղթի թանաքներ, մատիաներ, տետրակներ, քարտախառններ,  
գրատախտակներ, փոստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մանրագրերով, կարկիներ,  
նկարչութեան վերաբերեալ պիտոյքներ և այլն և այլն...

Բ. Թիֆլիսում արդէն յայտնի „Մանկակալի դաստիարակութիւն“  
(Дѣтское Воспитаніе) անունով պ. Աքիմեանի ֆիրման ևս անցաւ Կենտրոնական  
Գրավաճառանոցի ձեռքը, ուր փաճառվում են ամենատեսակ մանկակալական  
խաղալիքները ամենայն հասակի մանկանց համար:

Ընդունվում են պատուէրներ նաև արտաքին քաղաքների ուսումնարանական  
փարչութիւններից ու մանաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են:

Արտաքին քաղաքների օրիորդական ուսումնարանների փարչութիւնների գործը  
թեթեւացնելու համար Կենտրոնական Գրավաճառանոցը յանձնառու կը լինի կատարել  
և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից դուրս են, այն  
այն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր  
գնում: Այնպիսի պատուէրներն անկատար են մնում:

Կենտրոնական Գրավաճառանոցում ի միջի այլոց փաճառվում են հետեւեալ նոր

- Րաֆիի. Խենթը . . . . . 1 ր. 20 Կ.
- Դաւիթ Բէկ . . . . . 1 ր. 50 Կ.
- Յովհաննիսեան. Հայը և Հայաստանը օտարների աչքում . . . . . 1 ր. 30 Կ.
- Շահադիգեան. Հրապարակաբօս ձայն . . . . . 2 ր. — Կ.
- նոյն փառակազմ . . . . . 3 ր. — Կ.
- Այլազեան Գ. Արք. Պատմութիւն խալիպ. ուսումնարանի . . . . . 2 ր. 40 Կ.
- Աթանասեան. Երեւանի նահանգի բուսականութիւնը . . . . . 1 ր. 50 Կ.
- Բուսարանութիւն համառօտ . . . . . 1 ր. 30 Կ.
- Անփող պահանջներն անկատար են մնում:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ  
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կաթողիկոս փողոցի անկիւնում ՄԻ-  
ԿԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:  
Օտարաբարդաբացիք կարող են գինել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу  
Н. Теръ-Никогосову.  
36—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՅԻԻ „ԻԵՆԹԸ“ անու-  
նով փրկաստանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք գինել ՇՈՒՇԻ,  
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահապի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԿՈՒ  
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին:  
Հրատարակչի հասցէն. Մուսա, въ конторѣ Аргунянца АБЪЛУ АП-  
РЪСЯНЦУ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆԻ տակ  
բախվում ԳՈՐԾԱԿԱՏԱՐԱԿԱՆ ՊԱ-  
ՀԵՍՏԻ մէջ ստացված են և ծախվում  
են թէ մեծ քանակութեամբ և թէ առ-  
ձեռն արտասահմանի ԼԻԿԵՐՈՆԵՐ,  
ՐՕՄ ԵՒ ԿՈՆԵԱԿ: Ծարիտերի և  
Շատերի ՕՂԻ, զանազան կօնսերվներ,  
հիւսնայի իՒՂ, սարգիներ 28 Կ. արկղը,  
Սպիտակի ԽԱԿԵԱՐ ժեշտի տուփերի  
մէջ, կաթէ Մօկկօ ամենալաւ տեսակի, Օ-  
գէսայի ՍԱՊՈՆ լուացիքի համար, անգ-  
լիական նըըըտայ և ԼԵՂԱԿ մեծ  
քանակութեամբ, „Պալիօ“ գործարանի  
ՎԱԿՍԱ: Պօպօլի և մեր Ֆիրմայի  
ԹԷՅ: Եթէ մեր Ֆիրմայի թէյը գնողը  
ՉԸ ՀԱԻԱՆԻ, որ հազիւ թէ կը պա-  
տահի, կարող է վերաբարձնել և ՓՈՂ  
ՅԵՏ ստանալ:  
1—2 (3)

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԲՐՕՇԵՐՆԵՐ  
Թուսերէն, հայերէն և վրացերէն  
Թուսերէն 30 տեսակից 30 հատը 1 ու.  
հայերէն 3 տեսակից 50 հատը 1 ու. վրա-  
ցերէն 7 տեսակից 50 հատը 1 ու. մեր  
հասցէն. Թիֆլիս, Елизаветинская ул.  
№ 71, Аврааму Амирханьянцъ.  
17—20 (2)